ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2»

ք. Երևան «4» 04 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված
ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **01.11.2018թ.:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան, *ապահովելով նաև իրականացվող աշխատանքների ընթացքի տեսախցիկներով մշտական առցանց վերահսկում*:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված

աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 14 820 000 (տասնչորս միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից 2 470 000 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ՝ ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող մնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած մնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած մնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած մնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների

և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.7 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Կառավարական շենք N 2,	էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011018919	ՀՎՀՀ 05510886,
ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական գործակալության վարչությունում	հ/հ 205012200981
	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Ս/Ճ
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ս. Մուրադյան	_____ Հ. Ահարոնյան
(ստորագրություն)	
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1

« Կ » 04 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

ՀՀ Շիրակի մարզ Հոռոմ գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման իրականացվելիք աշխատանքների					
N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	գինը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	Ա-Նախապատրաստական աշխատանքներ				
1՛	Եկեղեցու հս-աե պարսպապատի և հս-ամ ծածկոցի քանդում-հեռացում ձեռքի գործիքներովմինչև 70 մ հեռավորությամբ	$մ^3$	5,60	6,73	37,71
2՛	Եկեղեցու շուրջ կուտակված և առանձին քարերի և բեկորների դասակարգված հեռացում և կուտակում ձեռքի գործիքներով մինչև 70 մ հեռավորությամբ	$մ^3$	26,50	6,73	178,44
3՛	Տարածքում աղբի, կուտակված հավաքածուների և շին աղբի, թափոնների մաքրում հեռացում ձեռքի գործիքներով 7,8$մ^3$	տ	14,04	0,96	13,42
4՛	Նույնի բարձում բեռնատար մեքենաները և տեղափոխում 3 կմ		14,04	1,69	23,70
3'	Վթարային թեքված պատերի վրա կիսագերաններով հենարանների իրականացում արտաքինից . (9 հատ)	$մ^3$	18,0	40,43	727,73
3''	Նույնի ապամոնտաժում	$մ^3$	18,0	12,56	226,06
5	Մետաղական խողովակներից ինվենտարային ներքին տախտակամածի կապում և քանդում մինչև 4մ բարձ. (2 անգամ)	$մ^2$	92,0	2,04	187,70
6	Մետաղական խողովակներից արտաքին և ներքին շարժական տախտակամածի կամրջակների կապում 1մ լայնք 4մ բարձր. (2 հատ)	$մ^2$	48,00	1,39	66,88
	Բ-Հողային աշխատանքներ				
1	Հիմքերի հատվածաբար փորում միջինը 1.5 մ լայն	$մ^3$	90,1	3,39	305,61
2	Հիմնատակի բուտաբետոնի իրականացում	$մ^3$	25,7	61,63	1584,40
3	Հիմքերի ամրակայում Ֆ20 դասի բետոնով	$մ^3$	84.5	107,84	9108,76
4	Ամրան A I դասի	տ	0,218	560,66	122,31
5	Ամրան A III դասի	տ	0,267	560,66	149,48
6	Երկտավր N40	մ	52,9	39,99	2114,65
7	% ~ n ԿԹ 8 մմ-24մ	կգ	7,0	1,84	12,82
8	Ø 3 բազալտե ամրան 900մ	մ	661,1	0,52	345,75
9	Հողի հետլիցք և տոփանում	$մ^3$	31,5	1,28	40,31
	Գ-Հուշարձանի ամրակայում				
1	Վթարային և ընկնող տեղաշարժված բեկորների քանդում իջեցում համարակալումով 27,9$մ^3$	$մ^2$	69,75	11,39	794,21
1''	Նույնի տեղափոխում 20մ հեռավորության վրա և դասակարգում	$մ^2$	69,75	11,82	824,31
	Պատերի բացվածքների ներարկում հատուկ բաղադրակազմի բարդ կրաշաղախով	լ	568,20	2,00	1137,19
	Պատերի ներքին մակերևութների շաղափում 600մմ քայլով 800 խոր	հատ	1000	1,91	1905,22
5	Նույն ամրանների տեղադրում հատուկ բաղադրության	$մ^3$	1,50	66,95	100,42

[1] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

	սոսնձակազմով				
5"	Եկեղեցու արտաքին պատերի պարագծային գոտեկապի իրականացում 100մմ լայնությամբ-74մ	տ	0,61	1040,46	634,68
6	Ներքին պատերի ցանցի տեղադրում և ամրացում	$մ^2$	460,8	1,59	731,06
6"	Հավաքված շին աղբի բարձում և տեղափոխում ձեռքի գործիքներով բեռնատար մեքենա 3կմ հեռավորությամբ-12,6$մ^3$	տ	22,68	2,40	54,43
12*	Եկեղեցու ներքին պատերից կրաավազային սվաղի մաքրում ձեռքի գործիքներով	$մ^2$	489,65	1,45	709,45
					22 136,7

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցու տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2

« 4 » 04 *2018 թ. կնքված*

«ՀՀՄՆ-ԳՀԱԾՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
Ա-Նախապատրաստական աշխատանքներ			
1'	Եկեղեցու հս-աե պարսպապատի և հս-ամ ծածկոցի քանդում-հեռացում ձեռքի գործիքներով մինչև 70 մ հեռավորությամբ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
2'	Եկեղեցու շուրջ կուտակված և առանձին քարերի և բեկորների դասակարգված հեռացում և կուտակում ձեռքի գործիքներով մինչև 70 մ հեռավորությամբ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
3'	Տարածքում աղբի, կուտակված հավաքածուների և շին աղբի, թափոնների մաքրում հեռացում ձեռքի գործիքներով 7,8մ3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
4'	Նույնի բարձում բեռնատար մեքենաները և տեղափոխում 3 կմ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
3'	Վթարային թեքված պատերի վրա կիսագերաններով հենարանների իրականացում արտաքինից . (9 հատ)	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
3''	Նույնի ապամոնտաժում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
5	Մետաղական խողովակներից ինվենտարային ներքին տախտակամածի կապում և քանդում մինչև 4մ բարձ. (2 անգամ)	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
6	Մետաղական խողովակներից արտաքին և ներքին շարժական տախտակամածի կամրջակների կապում 1մ լայնք 411 բարձր. (2 հատ)	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
Բ-Հողային աշխատանքներ			
1	Հիմքերի հատվածաբար փորում միջինը 1.5 մ լայն	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
2	Հիմնատակի բուտաբետոնի իրականացում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
3	Հիմքերի ամրակայում B20 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
4	Ամրան A I դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
5	Ամրան A III դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
6	Երկտավր N40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	07.11.2018թ.
7	Հեղյուս -∅ 8 մմ-24մ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
8	∅ 3 բազալտե ամրան 900մ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
9	Հողի հետլիցք և տոփանում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
Գ-Հուշարձանի ամրակայում			
1	Վթարային և ընկնող տեղաշարժված բեկորների քանդում իջեցում համարակալումով 27,9մ3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
1''	Նույնի տեղափոխում 2011հեռավորության վրա և դասակարգում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
3	Պատերի բացվածքների ներարկում հատուկ բաղադրակազմի բարդ կրաշաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.

4	Պատերի ներքին մակերևույթների շաղափում 600մմ քայլով 800 խոր	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
5	Նույն ամրանների տեղադրում հատուկ բաղադրության սասնձակազմով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
5"	Եկեղեցու արտաքին պատերի պարագծային գոտեկապի իրականացում 100մմ լայնությամբ-74մ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
6	Ներքին պատերի ցանցի տեղադրում և ամրացում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
6"	Հավաքված շին աղբի բարձում և տեղափոխում ձեռքի գործիքներով բեռնատար մեքենա 3կմ հեռավորությամբ-12,6մ3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
12*	Եկեղեցու ներքին պատերից կրաավազային սվաղի մաքրում ձեռքի գործիքներով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
1	Վթարային և ընկնող տեղաշարժված բեկորների քանդում իջեցում համարակալումով 27,9մ3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)

«Շինարար -97»
«Shinarar-97»
05510886

Հավելված թիվ 3
«4» 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45451600/9	ՀՀ Երևանի մարզի Հոռոմ համայնքի Սր Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ	0	0	0	963000	1926600	3000000	5409000	7854600	1037 000	11856000	11338000	11820000	**14820000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԱԿՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Տնօրեն՝

_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)

Կ.Տ

«ՇԻՆԱՐԱՐ-97»
„Shinarar-97"
05510886

Հավելված թիվ 4

« 4 » 04 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Ս/Ճ

Պատվիրատու
ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1

« 4 » 04 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ԳՅՈՒՄՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
INECOBANK

24.03.2018թ. N 6-605

Բենեֆիցիար՝
ՀՀ Ֆինանսների նախարարություն

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ EA18/00058

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Մշակույթի նախարարության և <<ՇԻՆԱՐԱՐ-97>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված <<Պետության կարիքների համար կապիտալային աշխատանքների կատարման պետական գնման>> թիվ <<<<ՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02>> պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում՝ մինչև 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Երաշխիքով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար)՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքը ուժի մեջ է մտնում ՀՀ Մշակույթի նախարարության կողմից Պրինցիպալի՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ում բացված թիվ 2050122009811001 դրամային հաշվեհամարին կանխավճարի գումարը՝ 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով ամբողջությամբ մուտք լինելու օրը և գործում է մինչև 20.12.2018թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից պահանջելու Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Պահանջում նշված վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

ա) Պահանջը չի համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին կամ

բ) Պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո կամ

գ) Սույն երաշխիքի 5-րդ կետով նախատեսված 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի կանխավճարն Բենեֆիցիարի կողմից ամբողջությամբ չի մուտքագրվել Պրինցիպալի՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ում բացված թիվ 2050122009811001 դրամային հաշվեհամարին:

11. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ՝ Ա. Ասլանյան

Կատարող՝ Կարինե Ավետիսյան

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 3101, ք. Գյումրի, Ալեք Մանուկյան փ. 6, Հեռ.՝ +(374 312) 4 30 75, 4 30 73
Ֆաքս՝ +(374 312) 4 30 75, Էլ. փոստ՝ gyumri.branch@inecobank.am, www.inecobank.am

Բանկային երաշխիքների տրամադրման

ՀԱՅՏ № HD16/00286-01

ք. Գյումրի 27.03.2018թ.

Ղեկավարվելով Բանկի և Պրինցիպալի միջև **29.07.2016թ.** կնքված թիվ **HD16/00286** Վարկերի, երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման գլխավոր պայմանագրով՝ խնդրում եմ տրամադրել Երաշխիք՝ հետևյալ պայմաններով.

ԲԵՆԵՖԻՑԻԱՐ՝ ՀՀ Մշակույթի նախարարության

ԵՐԱՇԽԻՔՈՎ ԱՊԱՀՈՎՎՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ թիվ ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02 պայմանագրի կանխավճարի ապահովման բանկային երաշխիք

ԵՐԱՇԽԻՔԻ ԳՈՒՄԱՐԸ՝ 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ

ԵՐԱՇԽԻՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ում բացված թիվ 2050122009811001 դրամային հաշվեհամարին կանխավճարի գումարը՝ 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով ամբողջությամբ մուտք լինելու օրը և գործում է մինչև 20.12.2018թ. ներառյալ:

ԵՐԱՇԽԻՔԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ՝ *3 (երեք) տոկոս տարեկան՝ տոկոսները հաշվարկելով օրական կտրվածքով՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:*

ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐՆԵՐԸ՝ *համաձայն բանկում գործող սակագների, վճարումը՝ տրամադրման պահին*

Կից ներկայացվում է՝

1. *Երաշխիքային նամակի ձև*

Պրինցիպալ՝

<<ՇԻՆԱՐԱՐ-97>> ՍՊԸ
գրանցման համար՝ 29.110.00948,
ՀՎՀՀ՝ 05510886
ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Տեքստիլագործների փ. 29/3

Տնօրեն՝ _____ **Հ. Ահարոնյան**

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ **27.03.2018թ.**

ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 27.03.2018թ. № HD16/00286-01 ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ԱԿՑԵՊՏ)

ԵՐԱՇԽԻՔԻ ԳՈՒՄԱՐԸ՝ 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ

ԵՐԱՇԽԻՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ում բացված թիվ 2050122009811001 դրամային հաշվեհամարին կանխավճարի գումարը՝ 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով ամբողջությամբ մուտք լինելու օրը և գործում է մինչև 20.12.2018թ. ներառյալ:

ԵՐԱՇԽԻՔԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ՝ *3 (երեք) տոկոս տարեկան՝ տոկոսները հաշվարկելով օրական կտրվածքով՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:*

ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐՆԵՐԸ՝ *համաձայն բանկում գործող սակագների, վճարումը՝ տրամադրման պահին*

ԵՐԱՇԽԻՔԻ ՀԱՄԱՐԸ՝ ***EA18/00058***

Երաշխիքը հաստատված է

Մասնաճյուղի կառավարիչ՝ _____ **Մ. Ասլանյան**

Պատասխանատու աշխատակից՝ _____ **Հ. Թորոսյան**

Երաշխիքի հաստման մասին տեղյակ եմ, պարտավորվում եմ սահմանված ժամկետում վճարել տոկոսադրույքը և միանվագ վճարները

ՊՐԻՆՑԻՊԱԼ
<<ՇԻՆԱՐԱՐ-97>>
ՍՊԸ
գրան. համար՝
29.110.00948,
ՀՎՀՀ՝ 05510886
ՀՀ, Շիրակի մարզ,
ք. Գյումրի,
Տեքստիլագործների փ.
29/3

Տնօրեն՝ Հ. Ահարոնյան

INECOBANK

20.06.2016 № 295

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք. Երևան Քսանը հունիսի երկու հազար տասնվեց թվականի

«Ինեկոբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությանը (որը գործում է Թումանյան տասնյոթ հասցեում) գործադիր տնօրենի ժ/պ Գառնիկ Թադևոսյանս լիազորում եմ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի կառավարիչ՝ **Մկրտիչ Ասլանյանին** (անձ. AK0646587, տրված 29.10.2010թ., 016-ի կողմից) հանդես գալու «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի անունից և «Ինեկոբանկ» ՓԲԸ ներքին ակտերով և փաստաթղթերով սահմանված կարգով և չափերով կնքել քաղաքացիա-իրավական գործարքներ, որոնք անհրաժեշտ են <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնությունների իրականացման համար:

Սույն լիազորագիրը տրված է 3 (երեք) տարի ժամկետով:

Մկրտիչ Ասլանյանին «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի կառավարչի պաշտոնից ազատելու դեպքում սույն լիազորագիրը դադարում է այդ պաշտոնից ազատման օրը:

Գործադիր տնօրենի ժ/պ՝ Գ. Թադևոսյան

ԻՍԿԱԿԱՆԻ

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի

Կառավարիչ Մ. Ասլանյան

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 0001, ք. Երևան, Թումանյան փ. 17, Հեռ.՝ +(374 10) 510 510
Ֆաքս՝+(37410) 510 573, էլ. փոստ՝ inecobank@inecobank.am, www.inecobank.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆ
ԱՍԼԱՆՅԱՆ

ՍԵՌ
Ա

ԱՆՈՒՆԸ
ՄԿՐՏԻՉ ՈՍՏԻԿԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՆԴ.Թ.
14.11.1974

ԾՆՆԴԱՎԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է
29.10.2010

ՎԱՎԵՐԱՑՆԵԼԻ Է ՄԻՆՉՄԻ
29.10.2020

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
016

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԱՐԻՔԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

COUNTRY CODE ARM

PASSPORT NO. AK0646587

SURNAME
ASLANYAN

GIVEN NAMES
MKRTICH

NATIONALITY
REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
14 NOV 1974

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
29 OCT 2010

DATE OF EXPIRY
29 OCT 2020

AUTHORITY
016

P<ARMASLANYAN<<MKRTICH<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AK0646587 6ARM7411146M2010290<<<<<<<<<<<<<<<06

4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՐՏ

Տրամադրված է
24 / 06 / 2004

Անվանումը ԱՍԼԱՆՅԱՆ
Սեռը ՄԿՐՏԻՉ
Հայրանունը ՈՍՏԻԿԻՆ
Հիմքը ՄՏԱՏԱՆԵՔ --

AB0637232

5

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ OBSERVATIONS

016

016

15

34